ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/99

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4243-2022 գրությամբ «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 04.03.2022թ. թիվ Ե/40/471-22 գրության հիման վրա, 14.03.2022թ. թիվ 26/26-1/4243-2022 գրությամբ նախաձեռնել է «Խաչմիք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Խաչմիք» ՍՊԸ-ին կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/99 ընթացակարգի շրջանակներում 18.03.2022թ. ժամը 09:25-ին և 01.04.2022թ. ժամը 09:22-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.03.2022թ. թիվ Ե/40/471-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22» ծածկագրով գնման ընթացակարգի աճուրդի ամփոփման, հայտերի գնահատման նիստում արձանագրվել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ: ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և նույն օրը համակարգող քարտուղարը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով առկա անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկում: Սահմանված ժամկետում «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է մասամբ, ինչի արդյունքում նրա կողմից ներկայացված հայտը թիվ 8 և 10 չափաբաժինների մասով գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժվել է:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներով՝ Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/99 ընթացակարգի շրջանակներում 18.03.2022թ. ժամը 09:25-ին և 01.04.2022թ. ժամը 09:22-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Խաչմիք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում էին թիվ 3, 5, 6, 8-11, 13-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, ինչպես նաև բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.02.2022թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկումները մասամբ են կատարվել, մասնավորապես՝ թիվ 8-րդ և 10-րդ չափաբաժիններով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում առկա են «կամ համարժեք»-ներ, որոնցից պարզ չէ թե ինչ ապրանքներ են առաջարկվում և որոշում կայացրել «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4243-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 04.03.2022թ. թիվ Ե/40/471-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները...:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Խաչմիք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում էին թիվ 3, 5, 6, 8-11, 13-րդ

չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, ինչպես նաև բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 24.03.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/ 5014-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվող «Խաչմիք» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, ծածկագիր՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22») գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/99 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առաջացել է eauction.armeps.am համակարգում (հետայսու՝ Համակարգ) առկա տեղեկատվությանը տիրապետելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համակարգին հասանելիություն ունի ՀՀ ֆինանսների նախարարությունը, խնդրում եմ տրամադրել «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22» էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ Համակարգում առկա հետևյալ տեղեկատվությունը.

Պատվիրատուի կողմից ե՞րբ է «Խաչմիք» ՍՊԸ-ին ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը և ի՞նչ բովանդակությամբ, ինչպես նաև տրամադրել ծանուցման արտատպումը»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.03.2022թ. թիվ Ն/26-1/6066-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան վերոհիշյալ գրության հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Խաչմիք» ՍՊԸ–ին ավտոմատ ծանուցման եղանակով 28/02/2022թ. ժամը 14:29-ին ուղարկվել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձ նամակ (կցվում է)»:

Այսպիսով՝ «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձ նամակի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.02.2022թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկումները մասամբ են կատարվել, մասնավորապես՝ թիվ 8-րդ և 10-րդ չափաբաժիններով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում առկա են «կամ համարժեք»-ներ,

որոնցից պարզ չէ թե ինչ ապրանքներ են առաջարկվում և որոշում կայացրել «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների և վկայակոչված իրավական կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ «Խաչմիք» ՍՊԸ-ն Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն անհամապատասխանությունները շտկել է ոչ ամբողջական, այսինքն՝ «Խաչմիք» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4243-2022 գրությամբ «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Խաչմիք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**